Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
17	Հունվար	2019 թ.	Բ	7487091278
[4] Առաքման ամսաթիվ				
17	Հունվար	2019 թ.		

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր

[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձ

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Որ թվում՝ բնապ. հարկ	Որ թվում՝ ճանապ. վճար փոխադ.
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 33102118բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

17/01/2019 15:21:00

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

05 դեկտեմբերի, 2018թ. ք.Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Տ.Ա.Ներկարարյանս, ուսումնասիրելով վարույթիս թիվ 33102118 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Լոռու մարզի Գուգարք գյուղի բնակիչ Վլադիմիր Լոգվինովի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Վլադիմիր Լոգվինովը, Վարդան Պետրոսյանը և Գևորգ Ղուկասյանը՝ ուրիշի զգալի չափերով գույք հափշտակելու նպատակով, նախնական համաձայնությամբ, խմբով 2018 թվականի սեպտեմբերի 1-ին՝ ժամը 20-ի սահմաններում, Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի «Արջի թալա» կոչվող տեղանքում գտնվող Ալբերտ Աղաջանյանի տան մուտքի մոտ հարձակվել են վերջինիս վրա և կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ փայտերով հարվածներ են հասցրել Ալբերտ Աղաջանյանի մարմնի տարբեր մասերին և հափշտակել վերջինիս պատկանող զգալի չափերով ոսկյա շղթան, ոսկյա մատանին ու 5,000 ՀՀ դրամը:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 2-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով հարուցվել է թիվ 33102118 քրեական գործը:

Նախաքննությամբ պարզվել է, որ Վլադիմիր Լոգվինովը Վարդան Պետրոսյանը և Գևորգ Ղուկասյանը 2018 թվականի օգոստոսի 31-ին Վլադիմիր Լոգվինովի առաջարկությամբ, վերջինիս հետ նախնական համաձայնության գալով Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի «Արջի թալա» կոչվող տեղանքում գտնվող շինությունների նկատմամբ պահպանություն իրականացնող Ալբերտ Աղաջանյանի գույքը հափշտակելու շուրջ, կատարելով դերերի բաշխում, հաջորդ օրը՝ ժամը 12:00-ի սահմաններում, հանդիպելով միմյանց՝ տաքսի ավտոմեքենայով մեկնել են Լոռու մարզի Մարգահովիտ գյուղ, որտեղ Վլադիմիր Լոգվինովը Գևորգ Ղուկասյանին և Վարդան Պետրոսյանին ցույց է տվել Ալբերտ Աղաջանյանի կացարանի տեղը, միաժամանակ հայտնել, որ Ալբերտ Աղաջանյանը ֆիզիկապես ուժեղ է և նրա հետագա դիմադրությունը թուլացնելու և զբաղեցնելու համար ինքը կոնյակ կխմի նրա հետ, որից հետո կզանգահարի Գևորգ Ղուկասյանին: Դրանից հետո Վարդան Պետրոսյանը և և Գևորգ Ղուկասյանը հեռացել են, իսկ Վլադիմիր Լոգվինովը գնացել է Ալբերտ Աղաջանյանին տեսակցելու նույն գյուղի մոտ գտնվող գարեջրատանը: Ալբերտ Աղաջանյանին հանդիպելուց հետո՝ Վլադիմիր Լոգվինովը կոնյակ և գարեջուր է խմել նրա հետ, ինչից մի քանի ժամ անց Գևորգ Ղուկասյանը զանգահարել է Վլադիմիր Լոգվինովին և հայտնել, որ իր հետ մուտք են գործել Ալբերտ Աղաջանյանի կացարան և նրա ոսկյա զարդերը չեն գտել: Բացի այդ, հայտնել է, որ մուտք են գործել նաև հարևանությամբ գտնվող Ալբերտ Աղաջանյանի պահպանությանը հանձնված շինություն և

այնտեղից հափշտակել են վրան-թիկնոց, բանալիների հավաքածու, համակարգչային խաղերի համար նախատեսված ղեկ, ոտնակներ, որոնք տեղավորել են սպորտային պայուսակների մեջ ու թաքցրել Ալբերտ Աղաջանյանի կացարանի մոտ: Նույն հեռախոսազրույցի ընթացքում Վլադիմիր Լոգվինովն առաջարկել է Վարդան Պետրոսյանին և Գևորգ Ղուկասյանին թաքնվել Ալբերտ Աղաջանյանի տան մոտ և սպասել հեռախոսազանգի: Դրանից հետո Վլադիմիր Լոգվինովը նկատելով Ալբերտ Աղաջանյանի մոտ գտնվող փաթեթը, և օգտվելով նրա բացակայությունից, բացել է այն ու տեսել, որ ոսկյա շղթան ու մատանին գտնվում են փաթեթի մեջ, ինչի մասին հեռախոսազանգով տեղեկացրել է Գևորգ Ղուկասյանին ու հայտնել, որ Ալբերտ Աղաջանյանի հետ միասին կմոտենան վերջինիս տանը, որպեսզի Վարդան Պետրոսյանը և Գևորգ Ղուկասյանը պատրաստված՝ դիմակավորված հարձակվեն Ալբերտ Աղաջանյանի վրա և հափշտակեն ոսկյա զարդերը:

Այնուհետև ժամը 20:00-ի սահմաններում Վլադիմիր Լոգվինովն Ալբերտ Աղաջանյանի հետ գնացել է նրա բնակարան, որտեղ մուտքի դռան մոտ Վլադիմիր Լոգվինովը թիկունքից հարվածել է Ալբերտ Աղաջանյանին, որից հետո դիմակավորված և փայտերով զինված թաքստոցից դուրս գալով Վարդան Պետրոսյանն ու Գևորգ Ղուկասյանը հարձակվել են Ալբերտ Աղաջանյանի վրա ու կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ ավազակությամբ, որպես զենք օգտագործվող այլ առարկաներով՝ փայտերով, Վլադիմիր Լոգվինովի հետ միասին հարվածներ են հասցրել Ալբերտ Աղաջանյանի գլխին, մարմնի տարբեր մասերին, ապա նրա մոտից հափշտակելով 5.000 ՀՀ դրամ, ոսկյա շղթա ու մատանի՝ դիմել են փախուստի:

Վերոհիշյալ հանցանքը կատարելու կասկածանքով 2018 թվականի սեպտեմբերի 02-ին Վլադիմիր Լոգվինովը, Վարդան Պետրոսյանը և Գևորգ Ղուկասյանը ձերբակալվել են:

2018 թվականի սեպտեմբերի 04-ին Վլադիմիր Լոգվինովին, Վարդան Պետրոսյանին և Գևորգ Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով:

2018 թվականի սեպտեմբերի 05-ին միջնորդություններ են ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ Վլադիմիր Լոգվինովի, Վարդան Պետրոսյանի և Գևորգ Ղուկասյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որոնք բավարարվել են:

2018 թվականի սեպտեմբերի 11-ին ոստիկանության Գուգարքի բաժնից գրություն է ստացվել, որ 2018 թվականի սեպտեմբերի 02-ից ստացիոնար բուժման մեջ գտնվող Ալբերտ Աղաջանյանը Երևան քաղաքի <<Սուրբ Գրիգոր Լուսավորիչ>> բժշկական կենտրոնում մահացել է:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վարդան Ավետիքի Պետրոսյանը տառապում է <<Անձի ասոցիալական խանգարում>> հիվանդությամբ, որի հիման վրա 2015 թվականի դեկտեմբերի 09-ին ճանաչվել է զինծառայության համար ոչ պիտանի և ՀՀ զինված ուժերից զորացրվել է պահեստազոր:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Վարդան Պետրոսյանի մեղսունակության և դրա հետ կապված քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի

հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 243-245 և 248 հոդ. հոդ. պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր ՊՓԲ ընկերությքան փորձագետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, իսկ Վարդան Պետրոսյանը, թիվ 33102118 քրեական գործի նյութերը և Վարդան Պետրոսյանի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա/ Վարդան Պետրոսյանը նախկինում և ներկայումս խրոնիկ կամ որևէ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ինչ հիվանդությամբ և երբվանից:

բ/ Եթե Վարդան Պետրոսյանը տառապում է հեգեկան հիվանդությամբ, ապա կարող էր արդյոք հանցավոր արարքը /արարքները/ կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել նրան իր գործողությունների փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից, թե ոչ, արարքը /արարքները/ կատարելիս Վարդան Պետրոսյանը գիտակցել է արդյոք իր արարքի փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը և ունակ է եղել արդյոք ղեկավարել իր գործողությունները, թե ոչ:

գ/ Վարդան Պետրոսյանն արդյոք մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

դ/Հաշվի առնելով Վարդան Պետրոսյանը մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյոք նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե ոչ:

ե/ Վարդան Պետրոսյանը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի:

4. Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Տ.Ա.Ներկարարյան**